ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 հունիսի 2022 թվականի N 805 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 21-Ի N 65-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունվարի 21-ի «Բժշկական հաստատություն տեղափոխված (դիմած) պացիենտի կամ դիակի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ոստիկանություն հաղորդում ներկայացնելու կարգը հաստատելու մասին» N 65-Ն որոշման հավելվածի՝

1) 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով նախատեսված դեպքերի համար բժշկական հաստատությունում վարվում է էլեկտրոնային գրանցամատյան՝ համաձայն ձևի (այսուհետ՝ գրանցամատյան), որտեղ հաղորդում ներկայացնելուց հետո մեկօրյա ժամկետում լրացվում է անհրաժեշտ տեղեկատվությունը:».

2) ձևը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ (ԴԻՄԱԾ) ՊԱՑԻԵՆՏԻ ԿԱՄ ԴԻԱԿԻ

Դպրոցական հասակ	Պացիենտի՝ բժշկական հաստատության տեղափոխման առավելագույն (դիմելու) օրը, ժամը	Պացիենտի ամառը, ազգանունը, հայրանունը (եթե այն հայտնի է բժշկական հաստատության դիմելու կամ տեղափոխվելու պահին)	Պացիենտի ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը (եթե այն հայտնի է բժշկական հաստատության դիմելու կամ տեղափոխվելու պահին)	Պացիենտի հաշվառման վայրը կամ մշտական բնակության վայրը, հեռախոսահամարը (եթե այն հայտնի է բժշկական հաստատություն դիմելու կամ տեղափոխվելու պահին)	Պացիենտի առողջական վիճակի վերաբերյալ տեղեկություններ, հնարավոր պատճառները, առողջական վիճակի ծանրության աստիճանը	Բռնի կամ հակաօրինական գործողությունների կասկածի դեպքում՝ վերջինիս մասին վկայող նշանների վերաբերյալ	Դիակի տեղափոխման օրը, ժամը	Հաղորդում ներկայացնող բուժաշխատողի անունը, ազգանունը, հայրանունը	Հաղորդումն ընդունող ՀՀ ոստիկանության աշխատակցի անունը, ազգանունը, հայրանունը, պաշտոնը	Հաղորդումը ներկայացնելու օրը և ժամը	Բռնի կամ հակաօրինական գործողությունների դեպքի վայրը, վնասվածք ստանալու հանգամանքների վերաբերյալ տեղեկություն-ները (հայտնի լինելու դեպքում)	Պացիենտին կամ դիակը բժշկական հաստատություն տեղափոխած մասնագետի միջոցի վերաբերյալ տվյալներ (հայտնի լինելու դեպքում) ներառյալ մակնիշ ունենալու դեպքում

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

02.06.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ